

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 24

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ա. Խաչատրյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բադալյանը, Գ. Սուքիասյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, բաժինների պետեր:

Մինչ օրակարգի հաստատումը համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը, հաշվի առնելով հարցերի հրատապությունը և համայնքի համար կարևորությունը, ինչպես նաև առկա տեխնիկական վրիպակը, առաջարկեց օրակարգի 9-րդ և 11-րդ հարցերը հաստատել նոր խմբագրությամբ, նշվածի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակի համայնքային սեփականության 2022թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

3. Աշտարակ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Վարկային պարտավորությունները մարելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Նվիրատվություն կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
7. «Համայնքային վերակերպումներ» ծրագրի շրջանակում տրամադրված գումարի մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
8. Աշտարակի համայնքապետարանի «Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/
9. ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրում առողջության առաջնային պահպանման կենտրոն /ԱԱՊԿ/ կառուցելու համար հողամաս նվիրաբերելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
10. «Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ին հողամաս նվիրաբերելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
13. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Օշական և Բազմաղբյուր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
14. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
15. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
16. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
17. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/
18. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակի համայնքային սեփականության 2022թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով, հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքներն՝ ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների: Ինչպես նաև հաստատել հանձնաժողովների կողմից դուրս գրման ներկայացված գույքի ցանկը /փաթեթը գտնվում է ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնում/:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 1206-Ն որոշման պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Վարկային պարտավորությունները մարելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և 102-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կարբիի գյուղապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական>> հիմնարկի և <<ԱՐՓԻՍՈԼԱՐ>> ՍՊԸ-ի միջև կնքված 17.11.2021թ. N ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-21/10 պայմանագրի շրջանակներում ձեռք բերված 100կվտ դրվածքային հզորությամբ

Ֆոտովոլտային կայանի համար <<Ակբա բանկ>> ԲԲԸ-ի հետ կնքված վարկային պայմանագրով մնացած գումարը մարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Ս. Սահակյանը նշեց, որ մնացած վարկային պարտավորությունը մարելու դեպքում համայնքը կունենա մոտ 12 մլն. ՀՀ դրամի խնայողություն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17-ԿՈՂՄ, 1-ԴԵՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Նվիրատվություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և 79-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի և <<ՄԱՅ ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ>> ՍՊԸ-ի միջև կնքված 09.02.2023թ. N ՀՀԱՄԱՇՏ-ՄԱԱՊՁԲ-23/3 պայմանագրի շրջանակներում ձեռք բերված 3 հաստ օդորակիչներն <<Աշտարակի մարզադպրոց>> ՊՈԱԿ-ին նվիրատվություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, սահմանել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման կանոնները՝ համաձայն հավելվածների: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա: Ս. Սահակյանը նշեց, որ սույն իրավական ակտով սահմանվում են բաժանորդին խմելու ջրի

մատակարարման և ջրահեռացման (ծառայությունների մատուցման, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման հետ կապված Մատակարարի և Բաժանորդի, Մատակարարի և Դիմող անձի փոխհարաբերությունները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17-ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - <<Համայնքային վերակերպումներ>> ծրագրի շրջանակում տրամադրված գումարի մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ <<Համայնքային վերակերպումներ>> ծրագրի շրջանակում <<Բարեկարգում>> ՀՈԱԿ-ին տրամադրված 60 000 եվրո գումարը, մարդատար տրանսպորտային միջոց ձեռք բերելու նպատակով, Աշտարակ համայնքի բյուջե տեղափոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Աշտարակի համայնքապետարանի <<Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շուշան Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, ստեղծել «Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն: Հաստատել «Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի 1-ի: Հաստատել համայնքային ոչ առևտրային կազմակերպության

կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի: Ընդունել ի գիտություն «Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով, նպատակը՝ յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է: «Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրակցել մարզ Արագածոտն, համայնք Արագածոտն 2-րդ փողոց թիվ 2 մանկապարտեզ հասցեի անշարժ գույքը: Ապահովել «Աշտարակ համայնքի Արագածոտնի թիվ 18 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 9 - ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրում առողջության առաջնային պահպանման կենտրոն /ԱԱՊԿ/ կառուցելու համար հողամաս նվիրաբերելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 06/02/2023թ. N 01/5.1/00407-2023 գրությունը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով համաձայնություն տալ Աշտարակ համայնք, Ոսկեվազ բնակավայր, Արագածի փողոց, 6-րդ նրբանցք հմ. 6 հասցեում գտնվող, 02-087-0351-0007 ծածկագրով 0,072հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրում առողջության առաջնային պահպանման կենտրոն (ԱԱՊԿ) կառուցելու նպատակով

Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - <<Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն>>
ՀԿ-ին հողամաս նվիրաբերելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն>> ՀԿ-ի նախագահ Սեյրան Թումանյանի դիմումը՝ ՀԿ-ին սեփականության իրավունքով պատկանող Աշտարակ քաղաքի Պոռոշյան փողոց 35 հասցեում գտնվող անշարժ գույքի ընդլայնման նպատակով հողամաս հատկացնելու մասին, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընդլայնվող անշարժ գույքը ՀԿ-ն ձեռք է բերել ՀՀ կառավարության 01.12.2022թ. N 1849-Ա որոշման և պետական գույքի նվիրաբերության 02.02.2023թ. Գ.Մ.1484 պայմանագրի համաձայն, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ <<Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն>> ՀԿ-ի սեփականությունը հանդիսացող Աշտարակ քաղաքի Պ. Պոռոշյան փողոց, N 35 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած հողամասի ընդլայնման համար 82.4քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը նվիրաբերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 11 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի,

Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի լիազորված անձ Սերգեյ Կակոսյանի 23.05.2022թ. N 2280՝ ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման համար հողամաս ձեռք բերելու մասին դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 և 29.12.2011թ. N 1920-Ն որոշումների պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0147-0002, 0027 ծածկագրերից, համայնքային սեփականություն հանդիսացող 0,002հա բնակավայրերի նշանակության այլ հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության փոփոխելու և ուղղակի վաճառքով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աղծք բնակավայրի 02-008-0132-0001 ծածկագրից, համայնքային սեփականություն հանդիսացող 0,002հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության փոփոխելու և ուղղակի վաճառքով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 13 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Օշական և Բազմադրյուր բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2022թ. N2/փ-306 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հաստատված կարգի 17-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Օշական և Բազմադրյուր բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող, հողամասերի նշանակությունների փոփոխությունները:

18 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 14 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական, երկու դեպքում՝

գյուղատնտեսական նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության՝/ոռոգման նպատակով ջրավազանի, պոմպակայանի և օժանդակ շինության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ առաջարկություններին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի, << կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումների պահանջներով, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով

օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 17 - *Ծառահատում կատարելու թույլտվություն տրալու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի ուսումնասիրությունը, ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ՝ Աշտարակ համայնքի Օշական գյուղի Մաշտոցի 95 հասցեում, Աշտարակ համայնքի Կարբիի դպրոցի մոտ, Աշտարակ քաղաքի Մուղնի 6-րդ թաղամասի 135 հասցեի մոտ, Աշտարակ քաղաքի Երևանյան փողոց 1 շենքի /ՀՀ ՆԳՆ Արագածոտնի մարզային վարչության/ մոտակայքում գտնվող երթևեկության և բնակչության համար վտանգ ներկայացնող՝ փտած, ախտահարված բներով, չորացած և մյուս բույսերի համար վարակի աղբյուր հանդիսացող ծառերը կտրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 18 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի ապրիլի 14-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2023 թվականի մարտի 14-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____
- ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
- ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
- ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____
- ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ